ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 41-Լ

«17» 04 2024 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, թիվ 2 կայազորի զինվորական դատախազության դատախազի 1 հաստիքը կրճատելու և Արարատի մարզի դատախազության դատախազի 1 հաստիք ավելացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանի 1-ին հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 4-րդ բաժնի 25-րդ գլխի 96-րդ կետի «Դատախազության դատախազ 4» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 5», իսկ նույն գլխի **«Ընդամենը 11»** բառերը՝ **«Ընդամենը 12»** բառերով,

2) 4-րդ բաժնի ***«Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում 109»*** բառերը փոխարինել ***«Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում 110» բառերով,***

3) 5-րդ բաժնի 46-րդ գլխի 172-րդ կետի «Դատախազության դատախազ 1» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 0», իսկ նույն գլխի **«Ընդամենը 3»** բառերը՝ **«Ընդամենը 2»** բառերով,

4) 5-րդ բաժնի ***«ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 87»*** բառերը փոխարինել ***«ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 86»*** բառերով,

5) 6-րդ բաժնի «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում դատախազների թիվը՝ 109***» բառերը փոխարինել «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում դատախազների թիվը՝ 110***», իսկ «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 87»*** բառերը՝ «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 86»*** բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ